

1. ԳԻՏԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Ս. ԹԵՄԻՐՅԱՆ, ԳԵՏԱԿ, 1909—1946, պատմա-բանասիրական ակադեմիկոս, Բեյրութ, 1956 թ.:

Ա. Ս. Թեմիրյանի պատմա-բանասիրական աշխատությունները ընդգրկում է սիրիական Արևելքի առաջին համաշխարհային պատերազմի ժամանակի շուրջ 40 տարվա պատմությունը:

Աշխատության առաջին մասում ներկայացված է Քեսապի իր շրջակա գյուղերով, ազգաբնակչությամբ, հնություններով, բերդերով: Տրվում են տեղագրական, ազգագրական, հնագիտական և այլ տեղեկություններ: Աշխարհագրական դիրքի պատճառով դարձել է շարունակ կտրված լինելով արտաքին աշխարհից, Քեսապի ու Ճեպլի Մուսայի բնակիչները պահպանել են իրենց հնավանդ սովորույթները, բարբերը, և մանավանդ բարբառները: Աշխատության մեջ բերված են մանրամասն տեղեկություններ այդ ամենի մասին: Կարևոր տեղ է հատկացված նաև համիդյան ռեժիմի արհավիրքներին, որոնցից անմասն չի մնացել նաև Քեսապի հայությունը: Հեղինակը մանրամասն նկարագրել է Քեսապի ու Ճեպլի Մուսայի 1915 թ. տեղահանությունը և Ճեպլի Մուսայի հայության հանրահալած հետևանքները:

Հեղինակն ընդարձակ տեղ է հատկացրել Քեսապի լեռնային տարիների ազգային, կրթական կյանքի պատկերմանը, հայրենասեր հայերի դեմ ֆրանսիացի զաղութարարների հալածանքներին, ինչպես նաև դաշնակցականների ավերիչ գործունեությանը ու ռժիմներին, որոնց դեմ են գնացել բազմաթիվ խաղաղասեր աշխատավորներ և առաջադիմական մտավորականներ:

Ա. Ս. Թեմիրյանը Քեսապի պատմությունը հասցրել է մինչև 1916 թվականը, այսինքն՝ մինչև ներգաղթի առաջին քաղաքներ, երբ Սփյուռքի զանազան երկրների բազմազան հայերի նման քեսապցիներն էլ խանդավառությամբ մասնակցեցին դեպի Սովետական Հայաստան կատարվող ներգաղթին:

ԿԱՐԱՊԵՏ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ԳԱԼՖԱՅԱՆ, ԳԻՐԲ առակաց, Բեյրութ, 1957 թ.:

Կ. Գալֆայանը ծանոթ է Սփյուռքի հայ բանասերների շրջանում իր «Զումախու», «Եղեմական հուշարձան», «Գիրք ելից Հայոց» պատմա-բանասիրական գործերով: Նրա ներկա աշխատությունը՝ «Գիրք առակաց»-ը բաղկացած է «Ասացվածքներ», «Առածներ», «Առ որ անկ է», «Բանն ասանկ է» մասերից: Հեղինակը նշում է առաջաբանում, որ իր նպատակն է եղել «Մեր ժողովրդական բանահյուսությունն, ասացվածքներն բաներ մեր գրել ու պատմության հանձնել, որպեսզի կորուստեն փշուր մըն ալ փթկվի և ճոխանա հայ մատենագրությունը»:

Կ. Գալֆայանի հրապարակած նյութերը մեծ մասամբ վերաբերում են Կիլիկիայում և նրա մերձակա վայրերում ապրող հայությանը և ազգագրական նյութեր են պարունակում:

ԼԵՎՈՆ ՄԵՍՐՈՊ, ԲՈՒՐԴԻՍՏԱՆ և ԲՈՒՐԴԵՐ, ակնարկ, Փարիզ, 1957 թ.:

Լևոն Մեսրոպի «Բուրդիստան և բուրդեր» ակնարկ է Իրանի և ընդհանրապես Մերձավոր Արևելքի բերդերի մասին:

Բացի ականատեսի սեփական տեղեկություններից հեղինակն օգտվել է նաև արևելյան ու եվրոպական մի շարք աղբյուրներից, որոնք արտացոլել են բերդերի պատմական անցյալը և դարավոր կուլտուրան:

Ակնարկն սկսվում է հեղինակի Իրանում կատարած մի ուղևորության նկարագրությամբ, որի ընթացքում նա առաջին անգամ անձնական շփում է հաստատել բերդերի հետ, սովորել է նրանց լեզուն և թափանցել քուրդ ժողովրդի կենցաղի մանրամասնությունների մեջ: Անուհետև հեղինակը նշում է 1896 թ. մինչև երկրորդ համաշխարհային պատերազմը Թուրքիայում և Իրանում քուրդ ազատագրական շարժ-

ման գլխավոր էտապները, ինչպես նաև հայ և բուլղ ժողովրդների փոխհարաբերությունները 19-րդ դարում, բերված են տեղեկություններ Իրանի բուլղ աշիրթներին, բրդերեն լեզվի և գրականության մասին:

Աշխատության վերջին գլուխը հատկացված է Սովետական Հայաստանի քրդերի կյանքի պայմաններին և կենցաղի նկարագրմանը: «Սովետական Հայաստանի բուլղ ժողովուրդը,— գրում է Լևոն Մեսրոպյանը գրքի վերջաբանում,—

իր ունեցած դյուրություններով և աննախընթաց վերելքով կվայելն առաջնակարգ դիրք համայն քրդության մեջ: Սովետական Հայաստանը դարձել է փարոս մը բուլղերու ցիր ու ցան հատվածներուն համար, մանավանդ այս միջոցին, երբ բուլղ ժողովուրդը, Թուրքիա և այլուր, իր դարավոր գոյության ամենն մոռալ շրջանը կապրի, ենթակա՝ ցեղային ատելության, հալածանքի և թոնի ձուլման»:

2. ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

4. ՍԻՏԱԼԻ, Արևածագ և առավոտ, հայալենի հուշեր, Ամերիկա, 1957 թ.:

Ամերիկահայ Առաջադիմական Միությունը լույս է բերել բանաստեղծ Կ. Սիտալի հուշերը («Արևածագ և առավոտ»), որոնք փարսացի հարուստ տվյալների վրա հիմնված Սովետական Հայաստանի ներկայացում են Սփյուռքի հայությանը:

Կ. Սիտալը վերջին տար տարիների ընթացքում երեք անգամ եղել է Սովետական Հայաստանում, նա Հայաստան այցելել է նաև առաջին իմպերիալիստական պատերազմի նախօրյակին, եղել է Երևանում, Վաղարշապատում և մի շարք գյուղերում, որոնց «անհրապույր տեսքը, ինչպես ինքն է վկայում, խոր վիշտ է պատճառել իրեն: «Այն ժամանակ, Վանի հետ բաղադատ» Երևանը մի մեծ, ողորմելի գյուղ թվաց ինձ»,— գրում է նա:

Կ. Սիտալն իր գրքի առաջին գլխում նկարագրում է Երևանը՝ «նախապատմական, կավաշեն, մալարիայի և աշրացավի բույներով և փողոցներով» լեռն ու փողոտ բլուրների միջև կծկված տիրատեսիլ, ողորմելի Երևանի տեղ հայրենասեր բանաստեղծը գտել է նոր Երևանը, որի թայն արևահորդ փողոցները լուսնոտ գետերի նման երկարաձգվում են դալար. դյուրական այգիների և ակնապարար, ներդաշնակ շենքերի երազային շարքերի միջով: Կառուցումների այդ աննախընթաց թափը Կ. Սիտալը գիտել է ոչ միայն Երևանում, այլև Հայաստանում կատարած իր ճանապարհորդության ամբողջ ընթացքում՝ բոլոր մյուս բաղադրերում, գյուղերում, ավաններում, արդյունաբերական նոր կենտրոններում:

Կ. Սիտալը Սովետական Հայաստանի ստեղծման և զարգացման հետ կապված մի շարք քաղաքական հանգամանքների հակիրճ հիշատակումից հետո պաշտոնական վիճակագրություններից քաղված թվական փաստացի

տվյալներով պատկերում է Հայաստանի արդյունաբերության, գյուղատնտեսության, մշակույթի բուռն ծաղկումն ու վերելքը:

«Սովի, համաճարակի, տնտեսական քայքայման մատնված... մեր ժողովուրդը,— գրում է Կ. Սիտալն իր գրքի վերջաբանում,— անհավատալի արագությամբ... ծաղկեցրեց և ագի ու վարդաստան դարձրեց արյունով ու մոխիրով ծածկված իր հողը. կառուցեց նոր ու շքեղ քաղաքներ ու ավաններ, հաստատեց արդյունաշատ և նոր տնտեսություն՝ հիմնված արդիական, հզոր արդյունաբերության վրա, ստեղծեց և ծաղկեցրեց հարուստ, բազմակողմանի, մեծաքանակ մի նոր մշակույթ...»:

ՀԱԿՈՐ ԳՈՒՅՈՒՄԸՅԱՆ, Երևանյան երգեր, բանաստեղծությունների ժողովածու, Ֆիլադելֆիա, 1957 թ.:

Բանաստեղծ Հակոր Գույումճյանը լույս է բերել «Երևանյան երգեր» բանաստեղծությունների ժողովածուն, որ ամբողջությամբ նվիրված է Սովետական Հայաստանին: Հակոր Գույումճյանը առաջին անգամ Հայաստան այցելել է 1955 թ. «Ամբողջ կյանքի մը կարոտներս հագեցան համբուրելով Սովետական Հայաստանի սրբազան հողը և ողջագուրվելով իմ հարազատ, ստեղծագործ և սրանչլի ժողովրդիս հետ: Գրեթե ամիս մը շրջեցա Հայաստանի լայնքին ու երկայնքին, և ականատես եղա այն վիթխարի կերպարանափոխության և ամենի նվաճումներին, որ մեր ժողովուրդը իրագործած էր ռուս մեծասիրտ ժողովրդի եղբայրական օգնությամբ և Հայաստանի հայրենասեր վարիչների ղեկավարությամբ»,— գրում է բանաստեղծը «Երևանյան երգեր»-ի առաջաբանում:

Հակոր Գույումճյանի նախկինում հրատարակած բոլոր ժողովածուների տիրապետող ոգին հայրենի երկրի հրատառ կարոտն է, որ

կան նշանակություն ունի Սփյուռքի հայության համար: Սփյուռքի հայ դպրոցական խնդիրը, ըստ հեղինակի, «ամեն րանն առաջ հայ ուսուցիչների խնդիրն է, նա ցույց է տալիս ճանաչող հաշիվների և թաղապանության արդյունքներին» այն միջավայրը, որի պայմաններում ստիպված է աշխատել հայ ուսուցիչը Սփյուռքում: Հեղինակն ուզում է մեկ անգամ ընդմիջող ջնջել շարիքի արմատը, իսկ դրա համար անհրաժեշտ է նախ և

առաջ բարելավել հայ ուսուցչի վիճակը:

Պ. Գևորգյանի «Մեծապատիվ մուրացկաններ» գիրքը պատմում է այն մասին, որ հայ-րենիքից հեռու, օտար աստղերի տակ պանդոկում հայության ազգապահպանման ծանր հոգսը ուսերին բարձած հայ կրթական մշակող միայն ամբողջովին զրկված է սոցիալական ամեն կարգի ապահովություններից, այլև չարի առևտրականների ձեռքում ենթարկվում է ամենօրյա ստորացումների:

3. ԱՐԸԽՍԻ ԵՎ ԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԼՐԱՏՈՒ

Գիրքի մասին Գուրգենի մասին

Հուլանդական մի շարք թերթեր հիացմունքով են արտահայտվում գիրքի մասին Գուրգենի մասին, որ Հարլեմի (Հոլանդական Հոլանդիա) ֆիլհարմոնիայի նվագախմբի ելույթներից մեկն է վարել հայրենիք վերադառնալուց թիչ առաջ, Կատարվել են Մոցարտի «Դոն ժուանո»-ի նախերգանքը, Շոպենի «Լեհական» սիմֆոնիան և Ռուսելի «Զոլոտորոգ սիմֆոնիան»:

Ամստերդամի «Հեթերոգեն Ֆուլ» թերթը գրում է. «Յուրահատուկ ձևերով օժտված արվեստագետ է Օհան Գուրգենը: Նա բաշխում ունի մանավանդ ուրիշների գեղագիտական բնույթներից շեղվելու... Շոպենի անվարտ սիմֆոնիայի մեկնարանները նոր լույս սփռեց այնքան ծանոթ այդ երկի վրա: Ինչ վերաբերում է Լուսիլի Չոբոլոգ սիմֆոնիային, թերթն ասում է. «Գուրգենի ձեռքի շնորհիվ նվագախումբն է հայտ ընկնում որակի գերազանցություն, որ զրոյմված պիտի մնա մեր հիշողության մեջ»:

Ռոտտերդամի «Երեւոյն Ռոտտերդամյան Քորանթ» թերթը գրում է. «Երբեք ասարդ հայ գիրք է չորսը հայ պաշտպանը, որ նվագախումբ վարելու արվեստը միմիայն տեխնիկայի խնդիր է, այլև անհրաժեշտ է միաժամանակ գիրքի տրական ձեռքի վարպետ լինել: Գուրգենը ամբողջ ծրագիրը վարեց հիշողությամբ, օժտելով յուրաքանչյուր երկ անհատական մեկնարաններով: Գուրգենը, որը և ճշմարիտ երաժշտի ոգու արտահայտությունն է»:

Ջուրակաճառ Մանուկ Բարիյանը

Սփյուռքահայ մամուլը բարձր է գնահատում Հոլանդիայի ֆիլհարմոնիայի սիմֆոնիկ նվագախմբի առաջին ղեկավար Մանուկ Բարիյանին, որը վերջերս եվրոպայի մի շարք եր-

կրների մայրաքաղաքներում հանդես է եկել համերգներով: Արվեստի մի թերթ գրում է. «Մանուկ Բարիյանն արվեստագետ բարձրորակ արժանիքներով օժտված վարպետ ղեկավար է, ինչպես ապացուցեց Բախի պարտիտայի կատարումը»: Նա հաճախակի ելույթ է ունենում Հոլանդիայի ակադեմիայի երգչի Ֆիլիպի հետ:

Հայ բանաստեղծները եվրոպական լեզուներով

1957 թ. սեպտեմբերի համարում ֆրանսիական Փարիզի Պյուզ դրակառուկյան և արվեստի պարբերականը լյուր Անդրե Մարսելի թարգմանությամբ ֆրանսիական հասարակայնությանը ներկայացրել է Սայաթ-Նովայի, Պետրոս Գուրգենի, Միսաք Մեծարենցի, Դանիել Վարուժանի և Եղիշե Չարենցի ստեղծագործություններից չորս բառասուն բանաստեղծություն: Անդրե Մարսելը սրանից մի քանի տարի առաջ ֆրանսերեն է թարգմանել նաև Նարեկի:

Գերմանացի գրող Գոլտ. Կերթրեդ Բիսշոֆը գերմաներեն է թարգմանել Նահապետ Քուչակի սիրային մի շարք տաղերը:

Փարիզահայ քաղաքներ

Արտասահմանի հայ մամուլի տեղեկությունների համաձայն փարիզահայ թատերեր որոշ կենսունակություն է հայտնաբերել վերջին տարիներին: Փարիզում բնադրել են Գ. Սունդուկյանի «Պեպո», Հակոբ Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկաններ», Շիրվանզադեի «Նամուս» և Նաիրի Չարյանի «Արա գեղեցիկ» պիեսները:

Սփյուռքահայ թատերագիր Գրիգոր-Վահանը հրապարակել է «Կինս անհավատարիմ է», «Բախտի անիվը», «Մեր կյանքը», «Երկու ճամփա», «Առանց սիրո» և «Տիգրան Մեծ» թատերգությունները:

Փարիզահայ մի ուրիշ թատերագիր՝ Հրաչ Տառնեյանը, հրատարակել է երեք նոր պիեսներ՝ «Հայրենիքն հեռու», «Վերադարձը» և «Մնացորդները»:

Նկարիչ Արտավազդ Պերպերյան

Սփյուռքահայ մամուլը գովասանքով է խոսում փարիզահայ նկարիչ Արտավազդ Պեր-

պերյանի մասին: Նա Փարիզ է գնացել Լիրանանից, որտեղ 1947 թ. առաջին անգամ ցուցադրել է իր գործերը: Փարիզում հետևելով էքզիզիվի Բոգարի դասընթացներին, կատարելագործել է իր արվեստը: 1951 թ. Փարիզի Սալոն դ' Օտոնի սահման ցուցադրել է իր «Յուլյը», «Հնաշյուղերի տղան», «Հտպիտը» յուզանկարները, որոնք արժանացել են ֆրանսիական մամուլի ուշադրությանը: Նույն տարին «Հանքագործը» դիմանկարով մասնակցել է Վարշավայի՝ ֆրանսիական արդի նկարչության ցուցահանդեսին:

Թ. Հ.